ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«18» 03 2022թ.
No 99-606

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻՆԵ ՋԱՌԱՀՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Շենգավիթ, Շիրակի փ. 45/74)

Հարգելի՛ տիկին Ջառահյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի մարտի 15-ի «Անհատ ձեռնարկատեր Մարինե Ջառահյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 104-Ա որոշմամբ (այսուհետ՝ **թիվ 104-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-00085/22 վարույթը:

Ձեր լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով Դուք կարող եք երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր հարուցված վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ: Ձեր հիմնավոր միջնորդության հիման վրա երկշաբաթյա ժամկետը Հանձնաժողովի նախագահի գրությամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով վարույթի շրջանակում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն՝

1. Ձեր կողմից թիվ 104-Ա որոշման մեջ նշված «OBUKHOV 65»/«OBUKHIV 65» անվանմամբ զուգարանի թղթի (այսուհետ նաև՝ **Ապրանք**) իրացման սկզբնաժամկետի վերաբերյալ՝ նշելով ամսաթիվը,

2. Ձեր կողմից 2021 թվականին Ապրանքի ներմուծման ծավալների վերաբերյալ (բնեղեն և արժեքային արտահայտությամբ)՝ կցելով ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի և առկայության դեպքում Ապրանքի ծագումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Դուք թիվ 104-Ա որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում Ձեզ վերագրվող իրավախախտման փաստն ընդունելու և իրավախախտման հետևանքները վերացրած լինելու դեպքում կարող եք արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով, ընդ որում, արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

4. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

5. Օրենքի 93-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման, մի քանի խախտումների դեպքում դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

6. Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը: Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ Ձեզ համար բարենպաստ հանգամանքների ապացուցման բեռը կրում եք Դուք:

7. Պատասխանատվության միջոցի ընտրությունը և տուգանքի հաշվարկումն իրականացվում է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 395-Ն որոշմամբ սահմանված մեթոդաբանությամբ:

Կից ուղարկվում է թիվ 104-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «5» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

competition.am կայքում հրապարակման օրը՝ 05 ապրիլի 2022 թվական

Կատարող՝ Զարուհի Մելքումյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (240)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2022 թվականի թիվ 104-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻՆԵ ՋԱՌԱՀՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի մարտի 15-ի նիստում, քննարկելով անհատ ձեռնարկատեր Մարինե Ջառահյանի (այսուհետ նաև՝ **ԱՁ Մ. Ջառահյան**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Կիևի ստվարաթղթե և թղթի գործարան» մասնավոր բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) ներկայացուցիչ Անաստասիա Սկաբեևան (այսուհետ նաև՝ **Դիմումատու**) 2022 թվականի փետրվարի 16-ին հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**) է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ Ընկերությունը Եվրոպայի խոշորագույն ձեռնարկություններից է, որի ստվարաթղթե և թղթե արտադրանքը արտահանվում է ԱՊՀ և այլ երկրներ: Ընկերությունը, թ թիվս այլ ապրանքատեսակների, արտադրում է «OBUKHOV 65»/«OBUKHIV 65» զուգարանի թուղթը, որի համար Ընկերությունն ունի մտավոր սեփականության իրավունքները հաստատող փաստաթղթեր: Մասնավորապես, Ընկերությունը ՀՀ-ում թիվ 15007 գրանցման համարով գրանցված ապրանքային նշանի վկայագրի սեփականատերն է: ՀՀ-ում միակ պաշտոնական դիստրիբյուտորը «Ստուգնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն (այսուհետ նաև՝ **«Ստուգնա» ընկերություն**) է:

Ընկերության կողմից արտադրված զուգարանի թուղթն անցնում է պետական որակի պարտադիր հսկողություն, սերտիֆիկացվում և համապատասխանում է բոլոր չափանիշներին և սանիտարահիգիենիկ նորմերին: Զուգարանի թղթի բնօրինակ պիտակը և գլանափաթեթները պատրաստվում են բացառապես Ընկերության

աշխատակիցների կողմից Ընկերության տարածքում տեղադրված սարքավորումների միջոցով:

Դիմումատուն հայտնել է, որ, ի թիվս, այլ տնտեսավարող սուբյեկտների, ԱՁ Մ. Ջառահյանը ՌԴ-ից թերարժեք հաշիվ-ապրանքագրով ներմուծում է կեղծված «Օբուխով» ֆիրմային անվամբ զուգարանի թուղթ, որը իրացվում է մանրածախ վաճառքի կետերում: Ըստ Դիմումատուի՝ ապօրինի արտադրված կեղծ ապրանքի վաճառքը մեծ նյութական վնաս է հասցնում Ընկերությանը, ստեղծում է անբարեխիղճ մրցակցություն, ինչպես նաև խաթարում է Ընկերության բիզնես իմիջը:

Հաղորդման համաձայն՝ Ընկերությունը հանցագործության մասին հայտարարություններով դիմել է ՀՀ իրավապահ մարմիններին՝ խնդրելով դադարեցնել ԱՁ Մ. Ջառահյանի ապօրինի գործունեությունը՝ «Օբուխով» ապրանքանիշով կեղծ ապրանքների ներմուծման և իրացման կապակցությամբ: ՀՀ իրավապահ մարմինների կողմից իրականացված ստուգման շրջանակներում ԱՁ Մ. Ջառահյանի ներկայացուցիչը հայտնել է, որ տեղյակ չի եղել «Օբուխով» ապրանքային նշանի սեփականության մասին և այդ մասին տեղեկացված չի եղել հեղինակային իրավունքի սեփականատիրոջ կողմից, ինչպես նաև պարտավորվել է արդեն իսկ գնված և ստացված խմբաքանակների վաճառքից հետո «Օբուխով» ապրանքանիշով զուգարանի թուղթը գնել միայն պաշտոնական աղբյուրներից: Ելնելով ԱՁ Մ. Ջառահյանի անտեղյակությունից՝ իրավապահները որոշել են հանցագործության մասին հայտարարությունները թողնել առանց շարժի՝ դիտավորության և հանցակազմի բացակայության պատճառով:

Դիմումատուն հայտնել է, որ ԱՁ Մ. Ջառահյանը, 2021 թվականի նոյեմբերի 18-ից տեղյակ լինելով զուգարանի թղթի կեղծ լինելու մասին, չի հրաժարվել դրա իրացումից: Ավելին, ԱՁ Մ. Ջառահյանի ներկայացուցիչը իրավապահներին հայտնել է, որ մտադիր է ՌԴ-ից ստանալ և վաճառել կեղծ զուգարանի թղթի հերթական խմբաքանակը:

Դիմումատուն նշել է, որ ԱՁ Մ. Ջառահյանի կողմից շարունակվում է կեղծ զուգարանի թղթի վաճառքը, ինչը խոշոր չափերով գույքային վնաս է հասցնում Ընկերությանը և բացասաբար է ազդում Ընկերության հեղինակության վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք ուղղված կլինեն ԱՁ Մ. Ջառահյանի ապօրինի գործունեության կասեցմանը, ինչպես նաև ծանուցել ՀՀ սահմանին գտնվող մաքսային մարմիններին «Օբուխով» ապրանքանիշով կեղծ ապրանքների ներմուծման մասին՝ անհրաժեշտ կանխարգելման և վերահսկման միջոցառումների ձեռնարկման նպատակով:

Հաղորդմանը կից նյութերի և Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի (այսուհետ նաև՝ **Գրասենյակ**) պաշտոնական կայքի (aipa.am) համաձայն՝ Գրասենյակի կողմից 2010 թվականի փետրվարի 2-ին ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱԾՄԴ) 16-րդ դասի ապրանքների (զուգարանի թուղթ) Ընկերության անվամբ գրանցվել և ՀՀ-ում իրավական պահպանություն է ստացել «ОБУХОВ ТУАЛЕТНАЯ БУМАГА OBUKHOV BUMAGA TUALETNAYA OBUKHIV PAPIR TUALETNI» համակցված ապրանքային նշանը:

Հանձնաժողովը՝ Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի փետրվարի 22-ի թիվ ԳԳ-373 գրությամբ (այսուհետ նաև՝ **Գրություն**), դիմել է ՊԵԿ-ին՝ խնդրելով, ի թիվս այլնի, տրամադրել տեղեկատվություն՝ ԱՁ Մ. Ջառահյանի կողմից 2021 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2022 թվականի փետրվարի 21-ն ընկած ժամանակահատվածում «Օբուխով», «OBUKHOV 65» և «OBUKHIV 65» անվանումներով զուգարանի թղթի իրացումից ստացված հասույթի չափի, իսկ անհնարինության դեպքում վերջինիս կողմից դուրս գրված բոլոր հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված գործարքների, ինչպես նաև ԱՁ Մ. Ջառահյանի կողմից նույն ժամանակահատվածում գործունեության հասցեների և համապատասխան հասցեներում ՀԴՄ-ի միջոցով կատարված գործարքների բացվածքի վերաբերյալ:

ՊԵԿ-ը, ի պատասխան Գրության, 2022 թվականի մարտի 1-ին տրամադրել է տեղեկատվություն, որի համաձայն ԱՁ Մ. Ջառահյանը դիտարկվող ժամանակահատվածում, մի շարք տնտեսավարող սուբյեկտների, այդ թվում՝

,

մատակարարել է «զուգարանի թուղթ» ապրանք, իսկ մատակարարման վայրը՝ ք. Երևան, Առնո Բաբաջանյան հասցեն է:

ՊԵԿ պաշտոնական կայքի ուսումնասիրությունից պարզվել է, որ ընկերության տնտեսական գործունեության տեսակը ոչ մասնագիտացված խանութներում այլ մանրածախ առևտուրն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ընկերության կողմից «OBUKHOV 65» անվանմամբ զուգարանի թղթի իրացման փաստը պարզելու նպատակով Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մարտի 1-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 32-Ա հրամանի հիման վրա 2022 թվականի մարտի 2-ին ընկերության կողմից շահագործվող՝ ք. Երևան, Առնո Բաբաջանյան հասցեում գործող խանութում իրականացնել հսկիչ գնում, որի արդյունքում ձեռք է բերվել 1 հատ «OBUKHOV»/«OBUKHIV» ապրանքային նշանով, 65 մ. երկարությամբ զուգարանի թուղթ (այսուհետ նաև՝ **Ապրանք**): Ապրանքի փաթեթավորման մակնշման համաձայն՝ այն արտադրված է Ընկերության կողմից, իսկ ներմուծման և վաճառքի բացառիկ իրավունքը ՀՀ տարածքում տրված է «Ստուգնա» ընկերությանը: ընկերության կողմից տրամադրված թիվ հարկային հաշվի համաձայն՝ Ապրանքը ընկերությանն է մատակարարվել ԱՁ Մ. Ջառահյանի կողմից:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, կետի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, այդ թվում՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող կամ այլ կերպ շրջանառության մեջ դրված ապրանքների, դրանց փաթեթավորումների կամ պիտակների վրա կամ ապրանքին առնչվող այլ տեղեկատվության մեջ կամ ինտերնետային դոմենի անվանումներում կամ գովազդում այնպիսի անվանման, նշանի, նիշի, հնչյունի կամ բառի օգտագործումը, որը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ տնտեսավարող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող կամ նրա կողմից ավելի վաղ օգտագործվող կամ հանրահայտ ապրանքային կամ սպասարկման նշանին կամ ֆիրմային անվանմանը.

2) այլ տնտեսավարող սուբյեկտի կողմից քաղաքացիական շրջանառության մեջ դրված ապրանքի, դրա արտաքին տեսքի կամ փաթեթավորման, գունային համակցության կամ այլ ոչ ֆունկցիոնալ բնութագրերի կրկնօրինակումը կամ նմանակումը:

Տվյալ դեպքում ԱՁ Մ. Ջառահյանի կողմից «OBUKHOV»/«OBUKHIV» ապրանքային նշանների օգտագործումն և Ապրանքի՝ վերը նկարագրված փաթեթավորմամբ իրացումն առերևույթ պարունակում է շփոթության առաջացմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ԱՁ Մ. Ջառահյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 78–րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Անհատ ձեռնարկատեր Մ՛արինե Ջառահյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թ. մարտի 16
Երևան